1, Փախրաքիւշ գիւղի մօտ ղէպի Ազատ գետը նայող անտառի մէջ՝ զառիվայր լանջումն է հին աւերակ մայրատապատ, հատարակ քար ու կրով շինած վանք «Մխալու վարդապետ» անուամբ (գուցէ Միխայէլ վարդապետ լինի)։ Մի քանի Սաղիանցի և Փախրաքիւշցի մարդկանց հետ գնալով Մխալու վարդապետի վանքը, աշխատեցինք արձանագրերը գտնել, և սեղանոյ օծեալ վիմի (վեմ քարի) շրջապատը փորելով և եղած քարերը շրջելով՝ գտանք 15ի չափ խաչ քարեր զանազան թուերով և զանազան մարդկանց անուններով, որք են հետեւեալքն

1. ‹Մ[ի]քայէլ էրեց. թվ. ՌԿԸ.› (1619)։
2. «Խաչս Տէր Հայրապետին»։
3. «Գրիգորին. թվ. ՌԿԸ»։
4. «Սուրբ խաչս բարեխաւս Ճանուպշին»։
5. «Սուրբ խաչս բարեխաւս Թոմասին»։
6. «Զուխտուրին»։
7. ‹Դինուչ աղային է›։
8. «Շահումին. թ. ՋԿԲ». (1513).
9. «ԹՎՆ ՌԿԸ. սուրբ խաչս բարեխաւս Գրիգորի որդի Խօջային»։
10. «Սուրբ խաչս բարեխաւս Աւագին»։
11. «Սուրբ խաչս բարեխաւս Գրիգոր քահանայ Տէր Կարապետին. թվ. ՌԿԸ»։
12. «Սուրբ խաչս բարեխաւս Կիրակոսին»։
13. «Աւանէսին»։
14. «Ալթունին Մրատխանին»։

Այս խաչը փոքրիկ դրութեամբ՝ բերեցինք Սաղիանի վանքը։

15. Շինեցաւ . . . ) Հէնց այս արձանագիրս պէտք է ցոյց տար վանքի շինութիւնը, գիւղի անունը և նոյն իսկ վանքի անունը,